# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 37/37.2/3010-15
02.03.2015թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան Ձեր 02.03.15թ. № 37/37.2/3010-15 գրության՝ քննության առնելով «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ հայտնում ենք հետևյալը.

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 8.1-րդ հոդվածով ամրագրվում է լիազոր մարմնի կողմից՝ ընդունված որոշման վերաբերյալ հայտատուի հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնելու հնարավորությունը, որը մասնակիորեն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ Մտավոր սեփականության գործակալության որոշումներն ու ծանուցագրերը հայտատուին ուղարկել հեռախոսային հաղորդագրության ձևով: Միաժամանակ կարծում ենք, որ ուղղակի հայտնելով, որ տվյալ հայտով որոշում է ընդունված, որևէ հարց չի լուծվում, քանի որ հայտատուն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու տվյալ որոշման կամ ծանուցագրի բովանդակության հետ: Հենց այդ պատճառով է, որ հայտատուի կողմից որևէ գործողություն կատարելու համար սահմանված ժամկետի հաշվարկն իրականացվում է համապատասխան որոշումը կամ ծանուցագիրը ստանալու օրվանից:

Միևնույն ժամանակ, Նախագծի 8.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվող

Կատարող՝ Լուսինե Վահրամյան
Գործարար միջավայրի բարելավման վարչություն
597-134

«մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Կարծում ենք նաև, որ հստակեցման կարիք ունի երբ որևէ գործողության կատարման համար սահմանված ժամկետի դեպքում նշվում է «անմիջապես տեղեկացնում է հայտատուին» արտահայտությունը: Նույնը վերաբերում է նաև նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված ծանուցման ժամկետներին ու կարգին:

Միաժամանակ, կից տրամադրվում են Նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝



ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի ստեղծման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հայտատուին ծանուցման կարգը և ժամկետները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով կարգավորվում են *գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի ստեղծման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված գույքային և անձնական՝ ոչ գույքային հարաբերությունները, մասնավորապես՝ հստակեցվում են հայտապրուին ծանուցելու կարգը ու ժամկետները* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ